«Լոռու մարզի Դեբեդի վարարումների արդյունքում տեղի ունեցած բնական աղետի ազդեցությունն ու հետևանքները տեղաբնակ կանանց ու աղջիկների վրա» ծրագրի ամփոփիչ զեկույց

«Ալավերդու բնական աղետի ազդեցությունն ու հետևանքները տեղաբնակ կանանց ու աղջիկների վրա. աղետներին դիմակայելու կնոջ բանաձևը»

2024

Զեկույցը պատրաստվել է Հայաստանում կանանց հիմնադրամի (ՀԿՀ) ֆինանսական աջակցությամբ՝«Սիգրիդ Ռաուզինգ Թրաստ հիմնադրամ» հիմնադրամի կողմից տրամադրված «Լոռու մարզի Դեբեդի վարարումների արդյունքում տեղի ունեցած բնական աղետի ազդեցությունն ու հետևանքները տեղաբնակ կանանց ու աղջիկների վրա» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում:
Սույն զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են «ՄԵԴԻԱԱԿՈՒՄԲ» Քաղաքացիական Հասարակության Զարգացման ՀԿ-ին, և կարող են չհամընկնել ՀԿՀ-ի տեսակետների հետ:

Զեկույցի հեղինակներ՝

Ռուզաննա Անտոնյան
Եվա Սարգսյան
Աննա Հովսեփյան

Մոնիթորինգի շրջանակներում ծրագրի շահառուների հետ հարցում-հարցազրույցներն իրականացրել են՝

Գրետա Կիրակոսյանը
Արմինե Խառատյանը

Զեկույցը խմբագրել է Նարինե Մաթևոսյանը

©2024 «ՄԵԴԻԱԱԿՈՒՄԲ» ՔՀՁ ՀԿ

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Սուխումի 1/85
Հեռախոս՝ +374 91 904 320
Էլ. հասցե՝ mediaclubngo@gmail.com
Կայքէջ՝ https://mediaclubngo.wordpress.com/

Բովանդակություն

I. ՆԱԽԱԲԱՆ 4

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

Իրավիճակի նկարագրություն 6

III. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10

2. Ինչ տեսանելի և ոչ տեսանելի ազդեցություններ ու հետևանքներ թողեց աղետը կանանց և աղջիկների վրա: Այս 2 ազդեցություններից ո՞րն էր ավելի հեշտ վերացնել և ինչու՞: 11

4. Պատկերացումներ գենդերային և բնապահպանական արդարության, ֆեմինիստական հարցերի և ֆեմինիզմի մասին 16

5. Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ բնական աղետները մարդու առողջության վրա 20

IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

I. ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցը տեղեկատվություն է տրամադրում «Լոռու մարզի Դեբեդի վարարումների արդյունքում տեղի ունեցած բնական աղետի ազդեցությունն ու հետևանքները տեղաբնակ կանանց ու աղջիկների վրա» ծրագրի շրջանակում Լոռու
մարզում Դեբեդի վարարումների արդյունքում ջրհեղեղից տուժած 80 կանանց ու աղջիկների շրջանում 2024թ. սեպտեմբերի 6-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ:

Ծրագրի գլխավոր նպատակն էր նպաստել Լոռու մարզի Ալավերդուն հարակից գյուղերում բնակվող 2024թ. մայիսի 26-ի ջրհեղեղից տուժած ընտանիքների կանանց և աղջիկների հոգեբանական ամրությանն ու կայունությանը. ինչպես նաև՝ հզորացնել և աջակցել այդ կանանց և աղջիկներին՝ աղետի հետևանքներին և ազդեցություններին դիմագրավելու, հաջողության, տոկունության պատմություններ ստեղծելու, դրանք որպես մոտիվացիա և դրական օրինակ հրապարակելու և տարածելու միջոցով:

Ջրհեղեղից տուժած համայնքներում մեր կազմակերպության անդամներն աղետի օրերին կամավորական աշխատանքներ են իրականացրել և զուգահեռաբար հավաքագրել տուժած համայնքների ու բնակչության կարիքները ջրհեղեղին հաջորդած օրերին, որն էլ հետագայում հիմք է հանդիսացել աղետի գոտում մոնիթորինգ իրականացնելիս որպես ջրհեղեղից ամենաշատ տուժած համայնքներ ընտրել Լոռու մարզի Ալավերդի, Սանահին, Քարկոփ և Ախթալա համայնքները: Նպատակ ունեինք մոնիթորինգի ենթարկել Դեբեդի վարարումների արդյունքում ջրհեղեղի ավերածությունների հետևանքներն ու դրանց ազդեցությունները հարցումների և հարցազրույցների մեթոդով:

«ՄԵԴԻԱԱԿՈՒՄԲ» ՔՀՁ ՀԿ-ի կողմից մոնիթորինգի միջոցով ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել 2024թ. մայիսի 26-ի Դեբեդի վարարումների արդյունքում ջրհեղեղի և ավերածությունների հետևանքներն ու դրանց ազդեցությունները՝ նպատակ ունենալով պարզելու նաև, թե կառավարության կողմից մշակված աջակցության և բնապահպանական ծրագրերի որ մասն է հաջողվել իրականացնել, առկա բացթողումներն ինչի արդյունք են, ինչպես նաև դրանց ազդեցություններն ու հետևանքներն աղետի գոտու կանանց և աղջիկների վրա:

Մոնիթորինգի արդյունքում վեր են հանվել և վերլուծության ենթարկվել աղետի գոտու տեսանելի և ոչ տեսանելի հետևանքների վերականգնման աշխատանքներին խանգարող հանգամանքներն ու դրանց հիմնական պատճառները:

Մոնիթորինգի արդյունքների վերլուծությամբ ստացված տվյալները կարող են հիմք հանդիսանալ, որ կառավարությունն աղետի գոտու հետ կապված իր

հետագա գործողությունների և ռազմավարության մեջ դրանք հաշվի առնի՝ ի նպաստ աղետի հետևանքների ավելի սահուն և արագ վերականգնման:

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը կատարելիս օգտագործվել են մոնիթորինգի տարբեր քանակական և որակական մեթոդներ, որոնք հիմնված են տվյալների առաջնային և երկրորդային աղբյուրների վրա:

Զեկույցը պատրաստվել է ծրագրի շրջանակում իրականացված մոնիթորինգի՝ սոցիոլոգիական հարցումների և հարցազրույցների, մոնիթորինգ իրականացնող թիմի քննարկումների ու փորձագիտական գնահատման և դրանց արդյունքների
վերլուծության հիման վրա:

Ծրագրի նպատակներին հասնելու համար իրականացվել են մի շարք գործողություններ ու միջոցառումներ, որոնք ապահովել են հետազոտության արդյունավետ իրականացումը: Դրանք են՝

1. Թիմի կողմից ստեղծվել և մշակվել է հարցաշար՝ մոնիթորինգի իրականացման համար:
2. Հմտությունների զարգացման հանդիպում-դասընթաց է իրականացվել հարցազրույցավարների հետ:
3. Իրականացվել է մոնիթորինգ, հարցման և հարցազրույցի մեթոդների կիրառմամբ, Դեբեդի վարարումների արդյունքում ջրհեղեղից տուժած 50 կանանց ու աղջիկների շրջանում: Ստեղծվել է մոնիթորինգի հարցումների առցանց տարբերակը ևս: Էլեկտրոնային եղանակով հարցումներին մասնակցել են աղետի գոտու թվով 30 կանայք և աղջիկներ: Այսպիսով, հարցվածների ընդհանուր թիվը կազմել է 80:
4. Ծրագրի ընթացքում հայտնաբերվել են աղետներին առավել սթափ դիմակայած կանայք և աղջիկներ, նրանց հետ տեսահարցազրույցներ են իրականացվել և մշակվել 5 «Հաջողության պատմություններ».
5. Ուսումնասիրելով և վերլուծության ենթարկելով մոնիթորինգի արդյունքները՝ ստեղծվել է սույն զեկույցը, որը կօգնի կանանց ու աղջիկներին աղետներին ավելի տոկուն և առանց խուճապի դիմակայելուն, իսկ կառավարությանը՝ մասնավորապես աղետներին արագ արձագանքելու որոշում կայացնողներին հնարավորություն կտա աղետների ժամանակ բնակչությանը՝ մասնավորապես կանանց և աղջիկներին, ճիշտ և բազմակողմանի աջակցություն ցույց տալ:

Իրավիճակի նկարագրություն

2024թ. մայիսի լույս 26-ի գիշերը, ըստ պաշտոնական տվյալների, հորդառատ անձրևների հետևանքով Դեբեդ, Աղստև և Տաշիր գետերը, դուրս գալով հունից[1]
/Դեբեդ գետի հունը մայիսի 26-ի կեսգիշերին, ըստ պաշտոնական տվյալների, բարձրացել է ավելի քան 2, իսկ ըստ բնակչության՝ շուրջ 6 մետրով. բնակիչները որպես ապացույց ներկայացրել են իրենց բնակարանների պատերի բարձրությամբ գետի ջրի թողած հետքերը/, ստեղծել են արտակարգ իրավիճակ՝ ճանապարհին ավերածություններ անելով, խորտակել գետերի պատնեշները՝ ահռելի վնաս հասցնելով ենթակառուցվածքներին, լցվել հյուրանոցներ, բնակարաններ, Սանահին կայարանի շենքերում բնակելիների առաջին հարկերը գրեթե ամբողջությամբ ջրի տակ առել, հիմնովին ավերել Լոռու մարզի Քարկոփ համայնքի մայրուղուն կապող միակ հետիոտնային և ավտոճանապարհ ծառայող կամուրջը, որի արդյունքում գյուղը հայտնվել է շրջափակման մեջ:

Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումներին մասնակցած կանայք և աղջիկները պատմել են, որ մի գիշերվա ընթացքում վարարած Դեբեդը քշել և տարել է տասնյակ ընտանիքների՝ գրեթե ամբողջ կյանքի ստեղծածն ու ունեցվածքը՝ կահույք, տեխնիկա, մեքենա, գոմ ու կենդանիներ, այգի ու բանջարանոց, հողատարածքներ, հագուստ ու կենցաղային իրեր և այլն: Անանցանելի են դարձրել համայնքային ճանապարհներն ու կամուրջները:

Իրավիճակի գնահատման արդյունքում ՀՀ կառավարության կողմից «Աղետի գոտի» է ճանաչվել Լոռու և Տավուշի մարզերի ջրհեղեղից տուժած 39 բնակավայր[2]: Ջրհեղեղի առաջին իսկ օրը Լոռու և Տավուշի մարզերում տարբեր բնակավայրերից տարհանվել է 190 մարդ, որոնցից 75-ը՝ փրկարարների օգնությամբ[3], իսկ աղետի հաջորդ օրերին տուժած բնակավայրերից Լոռու մարզում տարհանվել է 223 քաղաքացի, իսկ Տավուշում՝ 42: Ցավոք, ջրհեղեղի հետևանքով Լոռիում գրանցվել է նաև 3 մարդկային զոհ: Տավուշի մարզում ամբողջությամբ փլուզվել է 2, մասնակի վնասվել՝ 1 կամուրջ. հիմնովին փլուզվել է 3 բնակելի տուն, ջրալցվել՝ 45 տուն, 2 հյուրանոց, 18 հասարակական և այլ նշանակության օբյեկտ: Լոռու մարզում Դեբեդ գետի վարարման հետևանքով Մ6 ավտոճանապարհի Վանաձոր-Ալավերդի հատվածի 31-րդ կմ-ը հեղեղվել, և մոտ 50 մ երկարությամբ հատվածը փլուզվել է, վնասվել են գետի վրայով անցնող 3 կամուրջները և տարբեր նշանակության 70 շենք-շինություններ:

10 օր շարունակ կամավորական խմբերը (մեր թիմակիցները ևս ակտիվորեն մասնակցել են աղետի գոտում իրականացված կամավորական

[1] https://hetq.am/hy/article/166848
https://hetq.am/hy/articles/2024/05/26
[2] https://www.e-gov.am/gov-decrees/item/42683/
https://www.1lurer.am/hy/2024/05/28/1/1132012
[3] https://hetq.am/hy/article/166871

աշխատանքներին) իշխանությունների և տարբեր պատասխանատու կառույցների հետ համատեղ սնունդ, խմելու ջուր, առաջնային անհրաժեշտության իրեր և հիգիենիկ պարագաներ են հասցրել Ալավերդու և հեղեղից տուժած հարակից գյուղերի բնակիչներին, բահերով տիղմ ու աղբ դուրս լցրել արդեն բնակության համար ոչ պիտանի դարձած տներից: Աղետի գոտում իրականացվող աշխատանքների ժամանակ պարզ է դարձել, որ ստեղծված իրավիճակում ընտանիքների կանանց ու աղջիկների, հատկապես միայնակ կանանց վիճակն ամենածանրն է եղել տարբեր ասպեկտներով՝ աղետից փրկվելու արագ արձագանքման հմտությունների կիրառում, ֆիզիկական աշխատանք, սոցիալական և կենցաղային խնդիրների դիմագրավելու անհրաժեշտություն, հոգեբանական վիճակ և այլն:

Ջրհեղեղի հետևանքները վերացնելու նպատակով աղետի գոտում իրականացված կամավորական աշխատանքների ընթացքում մեր թիմի անդամները ևս արձանագրել են, որ ընտանիքի հոգսը հիմնականում ընկած է եղել կանանց ու աղջիկների ուսերին՝ սփոփել երեխաներին, հոգեբանական աջակցություն ցույց տալ նրանց, տաքացնել, կերակրել, պատսպարան գտնել, հագուստ ու սնունդ հայթայթել, այս ամենին զուգահեռ՝ նաև ջրհեղեղի հետևանքները վերացնելու աշխատանքներին մասնակցել:

Աղետի գոտում բնակվող կանայք և աղջիկները մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումների ընթացքում ներկայացրել են, որ աղետի առաջին օրերին իրենք ուղղակի ստիպված էին ուժեղ և ամուր լինել.
«Մեր չկոտրվող տեսակը, ուժեղ լինելը ուժ էր տալիս նաև մեր տղամարդկանց, մեր պահվածքով հույս էինք ներշնչում մեկս մյուսիս, դա մեզ շատ էր պետք այդ օրերին» /42 տարեկան, Ախթալա/:

Բայց օրեր անց իրականությունը կամաց-կամաց առաջ է բերել առկա դժվարությունների և խնդիրների՝ անվերջանալի թվացող շարանը: Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումների մասնակից կանայք և աղջիկները խոստովանել են, որ ջրհեղեղի առաջին պահին իրենք միայն մտածել են երեխաներին տարածքից անվնաս դուրս բերելու մասին, իսկ երբ աղետին հաջորդող օրերին ստիպված են եղել մտածել իրենց բնակավայրերը վերադառնալու մասին, արդեն սկսել են ավելի խոր գնահատել իրավիճակն ու այն նյութական և հոգեբանական կորուստների չափը, որի մեջ հայտնվել են իրենք, ընտանիքներն ու համայնքները, քանի որ ջրհեղեղի արդյունքում հարյուրավոր ընտանիքներ կորցրել են իրենց գրեթե ողջ ունեցվածքը՝ հայտնվելով «կոտրած տաշտակի» առաջ, իսկ ջրհեղեղից տուժած ընտանիքների կանայք և աղջիկները՝ հատկապես միայնակ կանայք, այդ աղետալի իրավիճակում, մոռանալով իրենց ես-ը՝ ստիպված են եղել հնարավորինս բնականոն կյանք ապահովել առաջին հերթին ընտանիքի անչափահաս ու սահմանափակ հնարավորություններ ունեցող անդամների ու նաև ողջ ընտանիքի համար:

«Վաղուց մոռացված մեր բակի ջրհորից սկեսուրս ջուր հանեց, բակում օջախ արեց, ջուրը տաքացրեց ու հենց բակում էլ ծառերից ծածկոցներ ու սավաններ կախեց, որ անցուդարձ անողների աչքից ծածկվի, տաշտը

դրեց կենտրոնում ու սկսեց ջրհորի ջրով հերթով լողացնել թաղի բոլոր երեխաներին: Օրվա պահանջը դա էր» /38 տարեկան, Քարկոփ/:

«Կանայք ուղղակի ստիպված են արագ ու ճիշտ ոչ միայն մտածել, այլև գործել: Գետն իր հետ ինչ ասես բերել էր, երեխաներն այդ ջրի մեջ էին մնացել, նրանց մոտ արդեն քոր էր սկսվել, կարողացանք առաջն առնել, հիգիենան կարևոր էր, ոչ մի վարակ, հիվանդություն չտարածվեց: Սա մեր հետևողականության և ճիշտ գործելու արդյունքն էր» /29 տարեկան, Քարկոփ/:

Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումների ընթացքում, հարցվող կանայք ու աղջիկները նշել են, որ, եթե ջրհեղեղի առաջին օրերին շատերն էին պատրաստ իրենց օգնել և օգնել են, ապա աղետից մեկ ամիս անց այդ ալիքը գրեթե մարել է: Հարցվողների համար այս իրավիճակը կանխատեսելի է եղել:

«Օգնությունները շատ էին, շատ են օգնել, գրեթե ամեն ինչով սկսած հագուստից ու սննդից մինչև բահ ու տիղմ մաքրելը» /53 տարեկան, Քարկոփ/:

«Առաջին օրերին մենք մենակ չէինք ու դա էր նաև մեզ ուժ տալիս» /19 տարեկան, Ախթալա/:

«Առաջին ալիքը անցավ ու մարդիկ սկսեցին յուրաքանչյուրն իր գործին գնալ, մենք պիտի մեզ ոտքի կանգնեցնենք, բայց կառավարության աջակցությամբ: Սա այն դեպքը չի, որ մենք ինքնուրույն կարողանանք իրավիճակից դուրս գալ, դուք էլ եք տեսնում, որ այստեղ կառավարության լուրջ աջակցություն է պետք» /44 տարեկան, Սանահին/:

Ստացվում է, որ աղետի գոտում հայտնված ընտանիքներն աղետից օրեր անց մնացել են իրենց նոր հոգսերի ու խնդիրների հետ՝ արդեն առանց կամավորական աջակցող խմբերի: Ստեղծված իրավիճակում կարևորվում է աղետի գոտու տարբեր խմբերի կանանց և աղջիկների վրա աղետների ունեցած ազդեցությունն ու հետևանքները, ինչպես նաև նրանց կողմից դրանց դիմագրավելու հնարավորությունների ավելի բազմակողմանի ուսումնասիրությունը:

Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումների 80 մասնակիցներից 7-ը՝ 16-25, 11-ը՝ 25-40, 32-ը՝ 40-55 և 30-ը՝ 55-ից բարձր տարիքի Դեբեդի ավերածություններից տուժած ընտանիքների կանայք և աղջիկներն են: Հարցումներին մասնակցած կանանց և աղջիկներից 41-ն ունեն միջնակարգ, 18-ը՝ միջին մասնագիտական, 21-ը՝ բարձրագույն կրթություն **(Գծապատկեր 1):**

Գծապատկեր 1



Հարցվածների 62%-ը համոզմունք է հայտնել, որ քաղաքացիների՝ աղետներին դիմագրավելու և բնապահպանական իրավագիտակցությունը բարձրացնելու խիստ անհրաժեշտություն կա: Այս խնդրի լուծման գործում հարցվածների 75%-ը կարևորել է իրավապաշտպան և բնապահպանական կառույցների, ՀԿ-ների և ԶԼՄ-ների դերը՝ նշելով, որ անընդհատ պետք է խոսել բնապահպանական խնդիրների մասին, բարձրաձայնել դրանք, ահազանգել, կարևորել դրանց՝ մարդու, հատկապես կանանց և երեխաների առողջության վրա ազդեցությունները: Հարցվածների 18%-ը, զարգացնելով այս միտքը, մանրամասնել է, որ մարդիկ սովորաբար ավելի ուշադիր և հետևողական կարող են լինել ոչ թե կլիմայական, էկոլոգիական, այլ ավելի շատ բնապահպանական առողջության և իրավունքներին առնչվող խնդիրների հանդեպ: Պատասխանների վերլուծությունից պարզ է դառնում, որ հարցված կանայք ու աղջիկները կարևորում են էկոլոգիական և բնակլիմայական խնդիրների ազդեցությունը՝ հատկապես մարդու առողջության վրա որպես ազդակ դիտարկելը:

«Ոնց ենք պայքարում, որ երեխաները էներգետիկներ չօգտագործեն կամ չծխեն, այդպես էլ պիտի բնությունը չվնասենք, որ մեր առողջությունն էլ չվնասվի: Պատկերացնու՞մ եք՝ յուրաքանչյուր մայր կամ ուսուցիչ, իսկ ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կանայք են, մեր երիտասարդ սերնդի հետ անընդհատ խոսի այս մասին» /20 տարեկան, Ախթալա/:

«Մենք իմացել ենք, որ պետք չի գետին խեղճացնել, մեծ քանակությամբ քար լցնել, բայց չենք պատկերացրել, որ այս տեսակ բան կլինի» /63 տարեկան, Քարկոփ/:

«Այն, որ անտառհատումներ չեն կարելի, գիտենք, բայց որ էսպիսի բան կլիներ. . . » /22 տարեկան, Ալավերդի/:

«Լավ կլինի, որ թեկուզ հենց էս աղետի մասին շատ ցույց տան, շատ գրեն, որ մարդիկ իմանան ու սրանից հետո գետի հետ խաղ չխաղան: Մարդիկ պիտի իմանան, մի քիչ էլ վախենան, որ էլ չկրկնեն նույն սխալները» /47 տարեկան, Սանահին/ :

III. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ջրհեղեղի ազդեցություններն ու հետևանքները տարբեր տարիքային, մասնագիտության, սոցիալական և կարգավիճակի կանանց ու աղջիկների խմբերի վրա

Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումներին մասնակցած կանայք ու աղջիկները, խոսելով բնական աղետի մասին, գրեթե միաձայն նշել են, որ ջրհեղեղի ժամանակ վտանգը բոլորին հավասարապես էր սպառնում, և որ աղետը բոլորի համար էր աղետ:

«Գետը չի հարցրել հարուստ և աղքատ, ահել ու ջահել, կին ու տղամարդ, բոլորս նույն վտանգի մեջ էինք» /33 տարեկան, Ալավերդի/:

«Հնարավոր չէր այդ պահին վախ չզգալ: Տղամարդիկ էլ էին սարսափի մեջ, կանայք էլ» /37 տարեկան, Ախթալա/:

Իսկ երբ արդեն անդրադառնում ենք ջրհեղեղին դիմակայելու հարցերին, հիմք ընդունելով հարցված կանանց և աղջիկների պատմությունները՝ կարող ենք նշել, որ այս պարագայում արդեն երևում են որոշ տարբերություններ՝ կախված ընտանիքների սոցիալական վիճակից: Օրինակ, Քարկոփ համայնքի 38-ամյա բնակչուհին պատմում է. **«Գյուղում Jeep, Pikap մեքենաներ ունեցողներ կան: Նրանք ավելի հեշտ են կարողացել դուրս գալ գյուղից, ջրհեղեղից ավերվող տարածքներից, որովհետև դրանք բարձր մեքենաներ են և ջրի մեջ ու ջրափոսերով կարողանում էին շարժվել, իսկ ավելի ցածր մեքենաները, օրինակ՝ մեր մեքենան խրվեց ջրափոսում ու այլևս չկարողացանք առաջ գնալ, մեծ մեքենա էր պետք, որ քաշի հանի ջրափոսից: Որոշ մեքենաներ ջրի մեջ հայտնվելով՝ զրկվել էին լուսարձակների լույսից, և եթե չլինեին այդ մեծ մեքենաների լույսերը, չգիտենք, չենք էլ պատկերացնում, թե ինչ կարող էր լինել մեզ հետ»:**

Այն ընտանիքները, որոնք չեն ունեցել անձնական մեքենաներ ու տեխնիկա, ստիպված են եղել անորոշ և անելանելի վիճակում օգնության սպասել: Կանանց ու երեխաներին հիմնականում դուրս են բերել տրակտորների կցորդիչների մեջ: Ընտանիքները, որտեղ միայնակ մայրեր են կամ հաշմանդամություն ունեցող անձինք, սպասել են, որ հարևաններն ու համագյուղացիները որևէ օգնություն առաջարկեն: Իսկ աղետալի իրավիճակում, երբ մարդը չգիտի, թե ինքն ինչպես է փրկվելու կամ դուրս գալու իրավիճակից, ըստ հարցվածների՝ առաջին պահին դժվար է եղել նաև հարևանների ու կարիքավորների մասին մտածելը: Բայց հարցված կանայք և աղջիկները նշել են, որ առաջին վտանգավոր ալիքից հետո,

երբ հայտնվել են քիչ թե շատ տանելի իրավիճակում, սկսել են մտածել հարևան ընտանիքների, միայնակ կանանց ու նրանց երեխաներին էլ դուրս բերելու, օգնություն ցույց տալու մասին: Այսինքն, աղետի առաջին խուճապային ալիքից ուշքի գալուց անմիջապես հետո սկսվել է «բոլորը բոլորին օգնելու» գործընթացը:

Հարցվածների 72%-ը նշել է, որ միայնակ մայրերի վիճակն ավելի ծանր է եղել: Հարցվածների 8%-ը միայնակ մայրեր են եղել և իրենց պատասխաններում նշել են, որ անելանելի ու խուճապային իրավիճակում են հայտնվել, թեև բավականին կարճ ժամանակում իրենց օգնել են, «բայց այդ ժամանակահատվածը սպասելն անգամ արդեն սարսափելի էր ու շատ երկար էր թվում» /36 տարեկան, Քարկոփ/: Մոնիթորինգի մասնակիցների 60%-ը նշել է, որ որոշակի ապահովության զգացողություն ունենալուց անմիջապես հետո գրեթե բոլորը սկսել են մտածել մյուսներին օգնելու մասին, քանի որ «բոլորն էլ նույն զգացողությունն ու վախն էին ապրում և նույն հոգեվիճակի մեջ էին գտնվում» /41 տարեկան, Ախթալա/:

«Հարևանս թակեց պատը, դուրս եկա, խառնաշփոթ էր. հասկացա, որ ջուրը տուն է լցվում, սկսեցի երեխաներին հագցնել, չէի հասկանում՝ ինչ եմ անում, անվասայլակին էլ սկեսուրս էր. բոլորն իմ խնամքին են: Ամեն ինչ շատ արագ էր ընթանում, հետո հարևանուհիս եկավ, օգնեցին, բարձրացանք գնացքի գծերը, այնտեղ արդեն շատ մարդ կար: Հիմա որ հետ եմ նայում, հասկանում եմ, որ գրեթե հրաշքով փրկվեցինք. . . » /39 տարեկան, Քարկոփ/:

Այսպիսով, կանանց ու երեխաներին ամեն դեպքում առաջնահերթություն է տրվել աղետից փրկվելիս, սոցիալապես ավելի ապահով խավն ավելի արագ է կարողացել դուրս գալ տարածքից: Այնուամենայնիվ, հարցվածների պատմածներից երևում է, որ բոլոր իրավիճակներում շարունակում են խոցելի մնալ հատկապես միայնակ կանայք ու մայրերը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

«Այն, որ ինքդ այդ պահին ոչինչ չէիր կարող անել և ստիպված էիր անորոշության մեջ օգնության սպասել, ավելի սարսափելի էր» 47 տարեկան, Ախթալա/:

2. Ինչ տեսանելի և ոչ տեսանելի ազդեցություններ ու հետևանքներ թողեց աղետը կանանց և աղջիկների վրա: Այս 2 ազդեցություններից ո՞րն էր ավելի հեշտ վերացնել և ինչու՞:

Հարցվող կանայք և աղջիկները երկար էին խոսում այդ սարսափելի գիշերվա, իրենց ապրումների, ջրհեղեղից փրկվելու մանրամասների մասին: Մեր հավաքագրած պատմությունները գրեթե անսպառ են: Մեր զրուցակիցներն ուզում էին անընդհատ խոսել, պատմել, նույն դրվագը մի քանի անգամ կրկնել, տպավորություն էր, որ ուզում էին իրենց ներսի վախերն ու անհանգստությունը պատմելու միջոցով հանել: Իրականում այդպես էլ կար: Այս իրավիճակն առաջին ապացույցն է աղետի ոչ տեսանելի հետևանքների առկայության:

Աղետից ամենաշատ տուժած համայնքը Քարկոփն էր: Ջրհեղեղից ժամեր անց լուր

տարածվեց, որ Լոռու մարզի Քարկոփ համայնքը կորցրել է գյուղը մայրուղուն կապող միակ կամուրջը և ընկել շրջափակման մեջ: Ձուր, սնունդ, հագուստ և անհրաժեշտ ամեն ինչ աղետին հաջորդող օրերին գյուղ հասցնում էին գետի վրայով անցկացված պարանների միջոցով: Հիշարժան է, որ հենց այս ամենաշատ վնասներ կրած գյուղի վարչական ղեկավարը ևս կին է՝ Հերմինե Պետրոսյանը: Ջրհեղեղի և աղետի հետվերականգնողական օրերին նա իր արագ կողմնորոշվելու ունակությամբ և գործողություններով հրաշալի օրինակ է եղել համագյուղացիների, այդ թվում և՝ կանանց ու աղջիկների համար: Վարչական ղեկավարը Քարկոփում է մնացել մինչև վերջին բնակչի՝ գյուղի տարածքից դուրս գալը: Բոլոր բնակիչների տարհանումն ապահով կազմակերպելուց հետո տարհանման աշխատանքներ իրականացրած փոքրիկ խումբը համայնքապետ Հերմինե Պետրոսյանի հետ մնացել է առանց տեխնիկական որևէ փոխադրամիջոցի. ստիպված են եղել ջրի հոսքի հետ կռիվ տալով՝ մթության մեջ ոտքով գյուղից դուրս գալու ճանապարհ գտնել: Որքան էլ լավ են իմացել իրենց գյուղի տարածքը, բայց մութն ու ջրի հոսքը խանգարել են նրանց ճիշտ կողմնորոշվել տեղանքում: **«Չեմ թաքցնում, սարսափ ապրեցի, երբ հասկացա, որ փրկարարական աշխատանքներ իրականացրած մի քանի համագյուղացիներիս հետ, այնուամենայնիվ, կորցրել ենք ճանապարհը: Ջրի մեջ քայլելով եկել, դեմ էինք առել մի ժայռի. մարմնի կեսից ավելի մասով ջրի մեջ էինք թաղված, ու էլ առաջ գնալու տեղ չկար, գրեթե ուժասպառ էինք, արդեն խեղդվելու սարսափից սկսեցինք գոռալ: Մեր ձայները լսեցին և հրաշքով օգնության հասան հարևան գյուղի բնակիչները: Այդպես փրկվեցինք» /23 տարեկան, Քարկոփ/:**

Այս դաժան իրավիճակը ևս մեկ անգամ հավաստում է, որ աղետը չի ճանաչում կին և տղամարդ. աղետի պահին չկա կին և տղամարդ ղեկավար, կա ուղղակի ղեկավար՝ իր պարտավորություններով ու պատասխանատվությամբ: Այս օրինակից պարզ է դառնում, որ կանայք կարող են հայտնվել ցանկացած իրավիճակում և անգամ ամենասարսափելի վտանգի պահին ոչ միայն իրենց մասին մտածել ու հոգ տանել, այլև կարևորել ընտանիքի, շրջապատի, միջավայրի, ի վերջո՝ հասարակության շահը:

«Ես չէի կարող մարդկանց թողնել և դուրս գալ գյուղից: Ինչ նշանակություն ունի, որ երիտասարդ կին եմ, չէ՞ որ վարչական ղեկավարը պատասխանատվություն պիտի կրի իր տարածքի բնակիչների համար: Գոնե պիտի տարհանումը կազմակերպեի ու իմ թիմակիցների հետ հիմա կարող եմ ասել, որ դա պատվով ենք արել:

Իհարկե, հետո շատ սարսափներ ապրեցի, բայց անմիջապես հաջորդ առավոտյան նորից եկել եմ գյուղ՝ վերականգնողական աշխատանքները կազմակերպելու, առաջնային անհրաժեշտության պարագաներն ու օգնությունները բնակիչներին բաշխելու:

Շատ կարևոր հանգամանք է նաև, որ ոչ մի զոհ չունեցանք, բոլորս փրկվեցինք» /Հասմիկ Պետրոսյան, 23 տարեկան, Քարկոփի վարչական ղեկավար/:

Այն, ինչի մասին վերևում խոսեցինք, ջրհեղեղի տեսանելի հետևանքների շատ փոքր

մասն է: Ջրհեղեղից ամիսներ անց էլ աղետի գոտու բնակիչները դեռ լուրջ անհանգստություն և վախեր ունեն, որ հորդառատ անձրևը հերթական ջրհեղեղի նախադրյալ կարող է դառնալ, քանի որ գետի պատնեշներն ամբողջությամբ ջուրը քշել, տարել է և նոր աղետի վտանգը դրանով ավելի է մեծացել, որ գարունն ավելի մեծ սպառնալիք է բերելու՝ ձնհալի ու հորդառատ անձրևների տեսքով նաև: Հարցված կանայք և աղջիկները, խոսելով իրենց կողմից բարձրաձայնված այս խնդիրների մասին, նոր աղետի սարսափ են տեսնում: Հարցին, սակայն, որո՞նք են ջրհեղեղի անտեսանելի հետևանքները, միայն 32%-ն է խոսում հոգեբանական սթրեսների ու ջրհեղեղի կրկնվելու հետ կապված վախերի մասին: Հարցվածների 21%-ը մասնակցել է աղետից հետո համայնքներում կազմակերպված հոգեբանների հետ հանդիպումներին, նրանց 8%-ն է վախերից դուրս գալու համար այդ հանդիպումներն արդյունավետ համարում:

Այսպիսով՝ հարցվածների 68%-ը խոսում է ջրհեղեղի տեսանելի, իսկ միայն 32%-ը՝ նաև դրա անտեսանելի ազդեցությունների և հետևանքների մասին **(Գծապատկեր 2):**

Գծապատկեր 2



Հարցվածները միաձայն նշում են, որ բնապահպանական գիտելիքներ ունենալը և դրանք երեխաներին փոխանցելը կարևոր է. հարցվածների 90%-ը կարևորում է մայրերի դերն այդ գործընթացում, իսկ թե ինչպես՝ 85%-ը խոսում է բնությունը մաքուր պահելու, չաղտոտելու, գետը չվնասելու մասին: 13%-ն ավելի լայն է մտածում այս առումով՝ նշելով, որ բնապահպանությունը միայն գետը չկեղտոտելը չէ, կան նաև այլ պատճառներ, ինչպիսիք են գետերի վրա կայաններ կառուցելը, անտառահատումները, հանքարդյունաբերության մեջ բաց հանքերի շահագործումը և այլն: 2%-ը գտնում է, որ «դա ասելով չի», մարդը ինքը պետք է ունենա բնապահպանական գիտակցություն:

«Օրինակ, էսքան ժամանակ է արդեն անցել, բայց մենք գրեթե ամեն երեկո, որ հավաքվում ենք, էլի սկսում ենք խոսել, հիշել՝ ոնց թակեցինք միմյանց

պատերը, դռները, ոնց արթնացրինք իրար, ոնց փախանք, ինչ դժվար օրեր անցկացրինք: Չենք կարողանում մոռանալ» 27 տարեկան, Ախթալա/:

«Մենք մենակ չէինք: Ոչ միայն մենք էինք միմյանց օգնում, այլև դրսից էին շատ կազմակերպություններ եկել, ամեն անհրաժեշտ բան բերում էին՝ ռետինե սապոգներ, ջուր, սնունդ, հիգիենիկ պարագաներ, փոքրիկ գազօջախներ ու ֆանարիկներ, աշխատանքային գործիքներ՝ ամեն ինչ: Մենք մենակ չէին, և դա մեզ ուժ էր տալիս» /31 տարեկան, Սանահին/:

Հարցվածների 48%-ը համոզված է, որ այս վախերը դեռ երկար կմնան մարդկանց մեջ. 31%-ը մտածում է, որ դեռ հիվանդություններ կհայտնաբերվեն, հետագայում աղետի հետևանքներ կդիտարկվեն նաև հենց այդ սարսափն ապրած աղջիկների մոտ. մտավախություն կա, որ նրանց ապագա երեխաները, հետագա սերունդները կկրեն նաև այս աղետի հետևանքները. որքան էլ ցավալի է, բայց հարցված կանայք չեն բացառում այդ վտանգը: Այստեղ ավելի բազմակողմանի աջակցություն է պետք կանանց և աղջիկներին: Հարցված կանանց և աղջիկների 27%-ը համոզված է, որ յուրաքանչյուր սթրես, այդ թվում և այս ջրհեղեղի հոգեբանական ազդեցությունները վերացնելու հստակ մեխանիզմներ պետք է մշակել և անպայմանորեն դրանք կիրառել. օրինակ՝ հանդիպումներ, զրույցներ, դասընթացներ, սթրեսներն ու զգացմունքները կառավարելու հմտությունների ուսուցում՝ հատկապես դեռահաս աղջիկների շրջանում: 21%-ն այլ վերաբերմունք է արտահայտել սրա վերաբերյալ՝ նշելով, որ «բնությանը բարկացրել էինք, աղետ էր, անցավ գնաց, էլ ինչի՞ց պիտի վախենանք»:

Հարցվածների թեև ընդամենը 32%-ն է՝ այն էլ մակերեսային, փորձում խոսել ջրհեղեղի ոչ տեսանելի ազդեցությունների մասին, բայց գրեթե 84%-ը պնդում է և համոզված է, որ աղետի տեսանելի վնասներն ավելի հեշտ է վերացնել, քան ոչ տեսանելիին:

«Հոգու, սրտի ստացած վերքը բուժելը դժվար ա» /67 տարեկան, Սանահին/:

«Ո՞րն ա հեշտ՝ ցեխը, կեղտը լապատկով դուրս տա՞լը, թե՞ հիվանդությունը բուժելը: Թող առողջ լինեմ, էլի կսարքեմ, բայց որ առողջությունս կորցրի, հա՛մ էն եմ կորցնում, հա՛մ էն» /63 տարեկան Ախթալա/:

«Օրինակ, 9 տարեկան աղջիկս սթրեսի մեջ էր, հաջորդ օրը երևի վախից էր՝ ջերմություն էր տալիս, չէինք հասկանում ինչ է կատարվում, բայց էնքան շոկային էր, որ չէի կարողանում օգնություն ցույց տամ կամ մի բժիշկ կանչեմ: Էդ ժամանակ արդեն Ճոճկանում էինք՝ բարեկամի տան, հենց շենքի տակ դեղատուն էլ կար, բայց ոչ մեկս չէինք հասկանում, թե ինչ է կատարվում, կամ ինչ անենք, ինչպես օգնենք, բոլորս խառնված էինք, չէինք կարողանում ուշքի գալ ու էրեխուն օգնել» /31 տարեկան, Քարկոփ/:

«Հաջորդ օրը հատկապես երեխաների վրա, չնայած մեծերի մոտ էլ կար,

կարմիր ցան էր դուրս տվել, էդ տիղմից էր, ջրի հետ բերած կեղտից, թե ինչ՝ չեմ կարող ասել, բայց լավ էր, որ վարակների բռնկումներ չեղան, կարողացանք առաջն առնել, բոլորս հետևեցինք մեզ, մեր երխաներին» /42 տարեկան, Սանահին/:

«Մի կորուստ ունեցանք, ցավալի բան էր. մեր գյուղի հարսներից մեկը էդ ջրհեղեղի ժամանակ հղի էր, երեխան մահացած ծնվեց, այդպես էլ չհասկացանք պատճառը. ենթադրում ենք, որ իր ապրած սթրեսի, վախի արդյունքն է եղել ամեն դեպքում, երևի ազդել էր երեխայի վրա» /52 տարեկան, Քարկոփ/:

3. Բնապահպանական գիտելիքների մակարդակի ուսումնասիրություն, դրանք շրջապատին փոխանցելու կարողություններ

Հարցումներին մասնակցած կանանց և աղջիկների 80%-ն ընդամենը տարրական գիտելիքներ ունի բնապահպանության մասին: Նրանց գիտելիքները գետը մաքուր պահելու և անտառը չհատելու տիրույթում են հիմնականում: Իսկ թե ինչ էկոլոգիական մարտահրավերներ կան ներկայումս, կլիմայի գլոբալ փոփոխությունների ու դրանց չնպաստելու համար ինչ պետք է անել, ինչպես ապրել՝ կա՛մ ընդհանրապես պատասխան չունեն, կա՛մ հիմնականում դժվարանում են կոնկրետ պատասխաններ տալ: Այստեղ մի շատ կարևոր դիտարկում ունենք. այս կանայք և աղջիկները, որքան էլ համարձակ են աղետին դիմագրավելու, դրա հետևանքները վերացնելու գործում, այնքան անհամարձակ են և վախենում են իրենց պատասխաններում սխալ բան ասելուց, ծիծաղելի վիճակի մեջ հայտնվելուց: Հարցումներին մասնակցած երիտասարդ կանայք և աղջիկներն այս առումով իրենց մտածողությամբ և պատասխաններում ավելի ազատ ու համարձակ են եղել:

Ստացվում է, որ ներկայիս իրավիճակում գրեթե խոսք չի կարող լինել մոլորակի բնական ռեսուրսների պահպանման, դրանց ռացիոնալ օգտագործման /օրինակ՝ մոնիթորինգի ընթացքում ջրի ռացիոնալ օգտագործման մասին հարցվածներից գրեթե ոչ ոք չի խոսել, այն դեպքում, երբ աղետի հետևանքները վերացնելու ժամանակ իրենք այդքան ունեին կենսական ջրի կարիքը/, ընդերքի հարստությանը, ջրի և օդի մաքրությանը վերաբերող հարցերի մասին չեն խոսել: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հարցմանը մասնակից բնությունը սիրող, բնության մեջ և բնության հետ ապրող մարդկանց մոտ բնապահպանական գիտելիքները, հետևաբար և՝ բնապահպանական մտածողությունն այնքան էլ բարձր մակարդակի վրա չէ, կամ այն ավելի շատ բնազդական տիրույթում է: Հետևաբար, այս պարագայում պետք է կարևորել աղետի գոտու բնակիչների մոտ նաև բնապահպանական դաստիարակության բազմակողմանի դրսևորումների մասին իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը:
Մոնիթորինգի նպատակով հարցումներին մասնակցած կանանց և աղջիկների շուրջ 67%-ը համոզմունք է հայտնել, որ տեղի ունեցածի մեջ նաև մարդկային գործոնն է իր դերակատարությունն ունեցել, և հարցը՝ արդյո՞ք թույլ կտաք, որ ձեր համագյուղացիները դարձյալ շարունակեն գետի ափամերձ տարածքներում հողագործությամբ զբաղվել, նրանց համար լուրջ մտածելու տեղիք է տվել:

«Քանի դեռ մեր կաշվի վրա չենք զգում, չենք հասկանում, որ բնությունն էլ կարող է համբերությունից դուրս գալ» /26 տարեկան, Ալավերդի/:

Հարցվածները հետևողականորեն զարգացրել են այն միտքը, որ յուրաքանչյուր ոք ինքը պետք է պատասխանատվություն կրի իր գործողությունների համար՝ դա համարելով յուրաքանչյուր քաղաքացու պարտքը.

«Իրենք պիտի հասկանան, չտեսա՞ն ինչ եղավ» /55 տարեկան, Սանահին/:

«Ես իմ հարևանին ո՞նց ասեմ, ինչ-որ տեղ նաև իր ապրուստի միջոցն է, բայց ինքը պիտի հասկանա, որ դա այ այսպես մի օր կվնասի բոլորիս» /49 տարեկան, Քարկոփ/:

26%-ն այս հարցի հետ կապված երկմտանքի մեջ է, նրանց կողմից կարևորվում են և՛ բնապահպանական խնդիրները, և՛ մարդկային հարաբերությունները, 8%-ն է միայն վստահաբար նշել, որ պետք է ուղղակի արգելել չնախատեսված վայրերում՝ հատկապես գետի հուն հանդիսացող տարածքում, բնակիչների կողմից որևէ գյուղատնտեսական գործունեություն կամ միջամտություն:

Հարցվածներն անհանգստությամբ են խոսել նաև հանքարդյունաբերության թափոնները և մեծ քանակությամբ ոչ պիտանի հանքաքարերը Դեբեդ գետը լցնելու մասին. **«Գետի մեջ լցվող հսկայական քանակությամբ քարերի մասին պետք է հոգ տանի կառավարությունը, դա մեր ուժերից վեր է, մեզ լսողն ո՞վ է, մենք չենք կարող հանքի տիրոջն ասել, որ էդ ահռելի քարերը գետը չլցնի: /61 տարեկան, Ախթալա/»:**

4. Պատկերացումներ գենդերային և բնապահպանական արդարության, ֆեմինիստական հարցերի և ֆեմինիզմի մասին

Գենդերային արդարության, ինչպես նաև ֆեմինիստական հարցերի և ֆեմինիզմի վերաբերյալ հարցերը հնչեցնելուց հետո հարցվածների մոտ 80%-ը կասկածելի հայացքով է սկսել նայել հարցումներն իրականացնող մեր թիմի անդամներին: Այսինքն, կանայք և աղջիկները դեռևս ռեալ պատկերացումներ չունեն այդ մասին, իսկ ֆեմինիզմ բառը շատերի մոտ նույնիսկ վախ է ներշնչել:

Այս հարցերի մասին քննարկումների ժամանակ հարցումներն իրականացրած մեր թիմակիցները պնդում էին, որ թեմայի վերաբերյալ՝ իրազեկվածության պակաս, հետևաբար՝ բացը լրացնելու լուրջ խնդիր կա աղետի գոտու կանանց և աղջիկների շրջանում: Սա մեզ մի քիչ չափազանցված թվաց, և հարցումներն իրականացնողների հետ համայնքներ սկսեցին գնալ մեր թիմի նաև այլ՝ ավելի փորձառու անդամներ: Պարզվեց, որ հարցվող կանանց և աղջիկների մեծ մասը հիմնականում չի պատկերացնում՝ ինչ է ֆեմինիզմը, գենդերային արդարությունը և այստեղ լուրջ բացթողում է արձանագրվել, հետևաբար նաև պարզ է դարձել, որ շատ անելիք կա թեմայի շուրջ՝ հատկապես միջահասակ և ավելի տարիքով կանանց և աղջիկների իրազեկման առումով:

Մոնիթորինգի շրջանակներում հարցված երիտասարդ կանայք և աղջիկները ֆեմինիզմի մասին ավելի ռեալ և բանիմաց պատկերացումներ ու վերաբերմունք են դրսևորել: 16-25 տարեկան 7 հարցվածներից 6-ը պատասխանել է, որ ֆեմինիզմը կանանց և աղջիկների քաղաքական, տնտեսական, մշակութային, անձնական և ընդհանրապես՝ բոլորին հավասար իրավունքներով, հնարավորություններով ու վերաբերմունքով օժտելն է: Սա բավականին հուսադրող հանգամանք է, քանի որ գյուղական համայնքներում իրազեկ երիտասարդների մեծ մասն այսօր իր համոզմունքները ոչ միայն կիրառելու, այլև դրանք շրջապատում ակտիվորեն տարածելու կամք է դրսևորում:

Հարցվածները բնապահպանական արդարության մասին խոսելիս նշել են նաև ջրհեղեղից հետո որոշ ալերգիկ երևույթների /մաշկի կարմրություն, ցան, քոր/, անչափահաս աղջիկների մոտ ստրեսից օրգանիզմի դիմադրողականության անկման և տարբեր հոգեբանական վիճակների դրսևորումների մասին: Իսկ Քարկոփ համայնքում, ինչպես արդեն վերևում նշել ենք, հղիներից մեկը մահացած երեխա է ծննդաբերել, որը ևս տեղաբնակ կանայք կապել են ջրհեղեղի հետ՝ որպես ապացույց բերելով այն հանգամանքը, որ ծննդկանը հղիության ողջ ընթացքում ոչ մի խնդիր չի ունեցել, հետևաբար երեխայի մահը ոչ միայն անսպասելի, այլև շատ զարմանալի է դիտարկվել, ու միակ պատճառը հարցված համագյուղացի կանայք կապել են ջրհեղեղի հնարավոր հետևանքների հետ:

Հարցվածների պատմություններից և պատասխաններից ակնհայտ է դառնում, որ կլիմայական և բնապահպանական արդարության՝ կոնկրետ Ալավերդու տարածաշրջանում բնությունը խաթարող ամենասուր մարտահրավերներն ապօրինի անտառահատումներն են, աղբն ու օդի աղտոտվածությունը, ՀԷԿ-երի անխնա շահագործումը, կենդանական աշխարհի «արգելված որսը», բաց հանքերի շահագործումը, պոչամբարների արտահոսքը, հանքարդյունաբերության քարի տեսքով թափոնների մեծ քանակությամբ գետի մեջ լցնելը և այլն:

«Սա հանցագործություն է մեզնից յուրաքանչյուրի դեմ և դրա հետևանքները մեր աչքով տեսանք ու համոզվեցինք հատկապես մայիսյան ջրհեղեղի ժամանակ»,- մոնիթորինգի շրջանակներում մեր հանդիպումներից մեկի ժամանակ ասաց «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի ծրագրերի ղեկավար Նինա Մամաջանյանը:

Այդ է պատճառը, որ այս իրավիճակը պետք է անհանգստացնի և զգոն պահի մեզնից յուրաքանչյուրին: Սա այն խնդիրն է, որ պետք է կարգավորվի օրենսդրությամբ, բայց մեր երկրում, ինչպես տեսնում ենք, շրջակա միջավայրի ոչնչացումն անգամ անօրինական չի համարվում: Թեև վերջին շրջանում համեմատաբար ուժեղացվել է հսկողությունն անտառahատումների հետ կապված, բայց այս հարցում էլ դրական արդյունքների հասնելու ճանապարհին դեռ շատ անելիք կա:
Իսկ հանքարդյունաբերության հետևանքները շարունակում են մնալ անպատիժ: Այստեղ էլ մարդիկ բաժանված են 2 խմբի. հանքերի շահագործմանը դեմ են հիմնականում այն ընտանիքները, որոնք հանքարդյունաբերության ոլորտում աշխատող ընտանիքի անդամներ, մերձավոր հարազատ-ազգականներ չունեն, և հակառակը՝ կողմ են, եթե հանքում աշխատող մտերիմներ ունեն:

Ստացվում է, որ երբ խոսում ենք աղետների, կոնկրետ այս դեպքում՝ ջրհեղեղի թողած ազդեցությունների մասին, հարցվողներն ուղղակի ասում են՝ «դե ջրհեղեղ էր, եղավ, անցավ», բայց երբ սկսում ենք բազմակողմանի հարցումներ, հենց իրենք արդեն մատնանշում են աղետի հետևանքների ու ազդեցությունների ցցուն օրինակներ՝ առանց խորապես գիտակցելու, որ հենց այդ մասին պետք է մտածել սեփական նախաձեռնությամբ և հնարավորինս փորձել խուսափել դրանցից, եթե հետագայում էլ հայտնվեն նման իրավիճակի մեջ:

Բոլոր այս եզրահանգումները նպաստում են կանանց և աղջիկների շրջանում իրավագիտակցության բարձրացման անհրաժեշտությունը որպես առաջնահերթություն մեկ անգամ ևս կարևորելուն:
Այս հանգամանքը հաշվի առնելով էլ մեր ծրագրի մեջ ներառել էինք նաև հաջողակ կանանց պատմություններ ստեղծելու և համացանցում դրանք հրապարակելու կոմպոնենտը: Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումների վերլուծությունից որոշակիորեն երևում է, որ կլիմայի փոփոխության մասին զեկույցները, որոնք այն ներկայացնում են որպես առողջապահական խնդիր, այլ ոչ թե պարզապես բնապահպանական, հասարակության ուշադրությունը գրավելու ավելի մեծ հավանականություն ունեն: Մարդիկ, հատկապես կանայք ու աղջիկները, մեր օրերում սկսել են ավելի կարևորել առողջապահական խնդիրները՝ նաև առողջ երեխա ունենալու, նրանց առողջ մեծացնելու առումով:

Այս մասին խոսելիս կանանց և աղջիկների կողմից հիմնականում կարևորվել է նաև սեփական առողջությունը: Բայց նրանց հետ զրույցի ժամանակ շոշափված ավելի բազմակողմանի հարցադրումների արդյունքում պարզ է դարձել, որ հայ իրականության մեջ կանայք և աղջիկները, որքան էլ գիտակցում են սեփական առողջության կարևորությունը, այնուամենայնիվ, մեծամասամբ շարունակում են հետին պլան մղել անձնական առողջական խնդիրների հանդեպ հետևողականությունը: Այսինքն, սեփական առողջությունը կարևորելու հարցը հարցված կանանց և աղջիկների համար դեռևս մնում է ավելի շատ գիտակցական, բայց դեռևս զուտ խոսքային մակարդակում և գրեթե միտված չի հասնելու լիարժեք գործնական քայլերի:

Մայիսյան ջրհեղեղի արդյունքում աղետի գոտու բնակչության շրջանում մոնիթորինգն իրականացնելու ընթացքում հայտնաբերել ենք աղետին ավելի սթափ դիմակայած կանանց և աղջիկների. տեսանյութերի ձևաչափով ստեղծել ենք նրանց հաջողության պատմությունները, որտեղ հերոսները ներկայացնում են իրենց կողմից առաջարկվող աղետներին դիմակայելու բանաձևերը:
Տեսանյութերի հերոսները կյանքով, ուժ ու եռանդով լեցուն կանայք են, ովքեր կարողացել են բավականին կարճ ժամանակահատվածում հնարավորինս վերացնել ջրհեղեղ-աղետի հետևանքները և փորձել են իրենց գործունեությամբ կյանքի բնականոն հուն վերադառնալ՝ օրինակ դառնալով և մոտիվացիա ստեղծելով նաև շրջապատող միջավայրի համար:

Այս կարճ ժամանակահատվածում կարողացանք ստեղծել 5 Հաջողության պատմություն, որոնք հրապարակել ենք «ՄԵԴԻԱԱԿՈՒՄԲ» ՔՀՉ ՀԿ-ի բլոգում https://mediaclubngo.wordpress.com և տարածել սոցիալական ցանցերում:

1. «**Բնության աղետների համար մեղավոր է նաև մարդը»** - Հասմիկ Զալինյանը

2 դուստրերի մայր է: Սիրում է հայրենի հողն ու ջուրը և միշտ մտածել է՝ ինչպես ներկայանալի դարձնել Հայաստան-հայրենիքը օտարերկրացիների համար: 2012թ. ամուսնու հետ որոշել և Ալավերդի քաղաքում հիմքն են դրել «Աթոռիկ» ռեստորանի: Ամուսնու մահից հետո Հասմիկն իր վրա է վերցրել Աթոռիկի գործունեությունը ղեկավարելու և շարունակելու ողջ պատասխանատվությունը: Ալավերդու տարածաշրջանում Դեբեդ գետի մայիսյան ավերածություններից հետո «Աթոռիկը» թվում էր՝ այլևս հնարավոր չի լինի վերականգնել ու աշխատեցնել: Բայց աղետից մեկ ամիս անց «Աթոռիկը» դարձյալ կարողացել է հյուրընկալել այցելուներ նաև արտերկրից: https://www.youtube.com/watch?v=QOXsh0c2sQo

2. «**Երբ աշխատանքի մեջ եմ, մոռանում եմ բոլոր ցավերս**»- Մարգարիտա Մնացականյանը կարի արհեստանոց ունի Սանահինում, որը Դեբեդ գետի մայիսյան ավերածություններից գրեթե ամբողջությամբ էր տուժել: Տիկին Մարգարիտան, սակայն, 2 ամիս անց վերսկսել է իր աշխատանքը, թեև արհեստանոցն ու կարի մեքենաները լուրջ վնասներ էին կրել ու գրեթե ամբողջությամբ շարքից դուրս եկել: Մարգարիտա Մնացականյանը հորդորում սիրել, պահել ու պահպանել բնությունը և երբեք չսպասել, թե ով կգա օգնելու, այլ որոշել ու իրականացնել այդ որոշումը սեփական նախաձեռնությամբ:
https://www.youtube.com/watch?v=t8kRmiaPLLU&t=55s

3. «**Ձեռքիդ ջերմությունը պիտի զգա հողը»** - Ալվարդ Բեջանյանը գտնում է, որ Դեբեդի ավերածություններում մարդն ինքն էր նաև մեղավոր. կոչ է անում սիրել բնությունը. «Ես խոսում եմ իմ ծառերի, թփերի, ծաղիկների հետ: Պիտի ջերմություն տաս, որ ստանաս»: Մեծ դժվարությամբ, բայց կարողացել է փրկել իր փոքրիկ այգին: Սկզբում Դեբեդի բերած ավազն ու կեղտն են մաքրել, հետո սկսել վիրավոր ծառերի խնամքը: Այժմ էլ երազում է համայնքին կից քարքարոտ խոպան տարածքները ձիթենու այգիներ դարձնելու մասին:
https://www.youtube.com/watch?v=vuggJ6hOXig&t=22s

4. «**Շրջափակված Քարկոփը վերագտնում է իրեն»** - Սուսաննա Վարդանյանը բազմազավակ մայր է: Դեռևս սարսափով է հիշում մայիսի 26-ի գիշերը, թե ինչպես երեխաներին գնացքի գծերով կարողացան դուրս բերել Քարկոփից, ինչպես թակեցին հարևանների դռները քնից արթնացնելու և ջրհեղեղից փրկվելու համար: Ջրհեղեղի վախը դեռ ամբողջովին չհաղթահարած՝ աղետի անմիջապես հաջորդ օրը սկեսուրի հետ գյուղ է վերադարձել՝ տունն ու բակը գետի բերած «ավարից» մաքրելու, այգին ու խանութը վերականգնելու և հնարավորինս շուտ կյանքի բնականոն հուն վերադառնալու նպատակով:
https://www.youtube.com/watch?v=YVzb0ZdX8dc

5. «**Բոլո՛ր պիտի բնապահպան լինենք»** - «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Նինա Մամաջանյանը նշում է, որ իրենց թիմն աղետի առաջին իսկ օրերից տարբեր աշխատանքներ է իրականացրել աղետի գոտում, այդ թվում և՝ ուսումնասիրություններ: Այն, ինչ տեսանելի է անզեն աչքով, ավելի հեշտ է վերականգնել ոչ միայն այն առումով, որ տեսնում ես, այլ նաև որ հստակ գիտես այդ մասին: Իսկ այն, ինչ տեսանելի չէ, հաճախ դժվար, երբեմն էլ՝ ուղղակի անհնարին է դառնում վերականգնելը՝ հոգեբանական սթրեսներ, հիվանդություններ, դանդաղ գործող այլ

ազդեցություններ: https://www.youtube.com/watch?v=VvbZYCdpaYA

Կանանց «Հաջողության պատմությունների» մեջ անդրադարձել ենք ոչ միայն Դեբեդ գետի ավերածություններին, այլև կլիմայական, բնապահպանական և գենդերային արդարությանը վերաբերող հարցերին՝ նպատակ ունենալով զուգահեռել դրանց աղերսները ֆեմինիստական հարցերի և ֆեմինիզմի հետ, բացահայտել կոնկրետ այս աղետի՝ ջրհեղեղի ազդեցություններն ու հետևանքները կանանց և աղջիկների վրա, ինչպես նաև ցույց տալ աղետի ժամանակ և դրանից հետո աղետն ապրած ու հաղթահարած կանանց և աղջիկների դերակատարությունը:

Հրապարակելով այդ պատմությունները՝ նպատակ ունենք բարձրացնելու ոչ միայն կանանց և աղջիկների, այլև հասարակության առավել լայն շրջանակների իրազեկվածության մակարդակը աղետների հնարավոր հետևանքների ու ազդեցությունների, ինչպես նաև դրանց դիմակայելու հնարավորությունների, հետագայում այդ աղետներից հնարավորինս խուսափելու հմտությունների ձևավորման վերաբերյալ:

Հաջողության պատմությունները կնպաստեն հասարակության իրազեկվածության բարձրացմանը, առկա բնապահպանական և ֆեմինիստական խնդիրներին հասարակական հնչեղություն տալուն, հաջողության պատմությունների հանրայնացմանը՝ որպես մոտիվացիայի աղբյուր դժվար իրավիճակներում հայտնված կանանց և աղջիկների համար և այլն:

5. Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ բնական աղետները մարդու առողջության վրա

Գաղտնիք չէ, որ ջերմաստիճանի գլոբալ բարձրացումը և եղանակային օրինաչափությունների փոփոխությունները մեծացնում են բնական աղետների՝ ինչպիսիք են անտառային հրդեհները, երաշտը, ջրհեղեղները, սողանքները, փոթորիկները և վնասվածքների ու հիվանդությունների այլ պատճառների հաճախականությունն ու սրությունը: Սրանք այն աղետներն են, որոնք գրեթե մշտական սպառնալիք են դարձել Ալավերդու տարածաշրջանում:

Բնակլիմայական այս աղետները մեծ ազդեցություն են ունենում մարդու առողջության վրա ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևով: Ուղղակի ազդեցություններ մենք արդեն տեսանք Դեբեդ գետի ավերածությունների արդյունքում, որը հանգեցրել է որոշ մշակաբույսերի և տարածաշրջանի բերքատվության նվազմանը: ՀՀ կառավարության կողմից 2024թ. մայիսյան ջրհեղեղի հետևանքով աղետի գոտի ճանաչված բնակավայրերում, եթե նույնիսկ հնարավոր է եղել մասնակիորեն փրկել բերքը, այնուամենայնիվ, հնարավոր չի եղել հավաքած բերքը հասցնել շուկա՝ վաճառելու՝ խաթարված կոմունիկացիաների, այդ թվում և՝ քանդված կամուրջների ու ճանապարհների պատճառով: Օրինակ, Քարկոփի բնակիչները նույնիսկ աշնանը ծառերից ստացած բերքը չեն կարողացել շուկա հասցնել, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, գյուղը մայրուղուն կապող միակ կամուրջը ջրհեղեղը քշել-տարել է: Աղետից գրեթե 7 ամիս անց գյուղն արտաքին

աշխարհին կապող միայն հետիոտնային կամուրջ ունի: Գյուղացին շրջափակման մեջ է հայտնվել, արդյունքում գրանցվել է սննդամթերքի գնաճ, սննդի, խմելու և ոռոգման ջրի անվտանգության ու վերահսկողության բացակայություն, տարածքի սոցիալապես անապահով բնակչության /գործազուրկ, միայնակ մայրերի խնամքին մնացած, սեզոնային, ժամանակավոր աշխատանքով ապրող ընտանիքներ, հաշմանադամություն ունեցող անձինք, միայնակ կենսաթոշակառուներ և այլն/ ենթադրելի թերսնում, այդ թվում՝ հղիներ, միայնակ մայրեր, հաշմանդամություն ունեցող կանայք ու աղջիկներ և այլք: Այն հանգամանքը, որ աղետի գոտու բնակիչները չեն կարողացել առաջին հերթին սպասված բերքը ստանալ, ապա՝ հավաքել ու վաճառել, հետևաբար նաև ակնկալվող շահույթը չեն ստացել, հիմք է տալիս արձանագրելու, որ Ալավերդու տարածաշրջանում նաև աղքատության աճ կգրանցվի, հետևաբար նաև՝ բնակչության տեղաշարժ, բնակլիամայական միգրացիա, հոգեկան առողջության վրա բացասական հետևանքներ և դրանցից բխող այլ շղթայական խնդիրներ:

Հարցվածների 18%-ը նշել է, որ ջրհեղեղից հետո սկսել է մտածել բնակության վայրի փոփոխության մասին: Նրանց հիմնական մասը Քարկոփ համայնքի երիտասարդ ընտանիքների կանայք ու աղջիկներն են: Հարցվածների կողմից ներկայացված հարցին առնչվող պատճառները տարբեր են. որպես հիմնական պատճառներ նշել են գյուղը միջհամայնքային ճանապարհին կապող տրանսպորտային կամրջի բացակայությունը, ջրհեղեղից հետո շահագործման ոչ ենթակա դարձած և գործունեությունը դադարեցրած մանկապարտեզը: Հարցվածները նշել են, որ հատկապես ձմռանը շատ դժվար է վաղ առավոտյան հարևան գյուղի /Ճոճկան համայնքի/ մանկապարտեզ տանել երեխաներին, իսկ գյուղում երեխաների համար ոչ մի այլ կրթարան, զարգացման կենտրոն կամ արվեստի խմբակ չկա. «Մանկապարտեզն այլևս չի գործում, դպրոցն էլ 9-ամյա է, գետի վտանգն էլ միշտ կա: Գյուղում մնալու ինչ հեռանկար ունեն մեր երեխաները»,-շեշտադրել են երիտասարդ ընտանիքների կանայք և մշտական բնակության փոփոխության հարցն արդեն բերել իրենց ընտանիքների օրակարգ:

«Ջրհեղեղից հետո այն ընտանիքները, որոնք հնարավորություն ունեն, իրենց սեփական մեքենայով երեխաներին տանում են հարևան Ճոճկան գյուղի մանկապարտեզ. ովքեր էլ էդ հնարավորությունը չունեն, ստիպված մտածում են գյուղից գնալու մասին» /56 տարեկան, Քարկոփ/:

«Պատկերացնու՞մ եք՝ ձմեռը 3-4 տարեկան երեխաներին առավոտյան ցրտին տանենք հասցնենք Ճոճկանի մանկապարտեզ, բայց ախր տանն էլ թողնել չի կարելի, մանկապարտեզի դաստիարակությունը շատ կարևոր է մեր երեխաների զարգացման համար» /27 տարեկան, Քարկոփ/:

«Մենք մտածում ենք գյուղից գնալու մասին, արդեն էլ ո՛չ մանկապարտեզ կա, ո՛չ էլ ավագ դպրոց, ո՛չ որևէ խմբակ ու զբաղմունք երեխաների համար» /29 տարեկան, Քարկոփ/:

«2 դպրոցական երեխաներս են իմ խնամքին: Ջրհեղեղից հետո տունը լուրջ վերանորոգման կարիք ունի: Գոնե կամուրջը չկա, որ շինանյութը մեքենան

գյուղ բերի, բակ հասցնի: Ստիպված եմ ու արդեն մտածում եմ գյուղից տեղափոխվելու մասին, ես չեմ կարող պետության տված այդ գումարով էս տունը խելքի բերել» /34 տարեկան, Քարկոփ/:

Հարցված կանանց և աղջիկներից ոչ ոք չի կարևորել և սեփական նախաձեռնությամբ ջրհեղեղից հետո չի անցել որևէ բժշկական զննություն: Սակայն հարցվածների 44%-ը նշել է, որ հետջրհեղեղյան շրջանում այս կամ այն պատճառով ստիպված է եղել և անցել է բժշկական տարբեր ստուգումներ: Բժշկական զննություն անցած կանանց ու աղջիկների 38%-ի մոտ հայտնաբերված կամ կասկածելի ախտորոշման դեպքում զննող բժիշկը հարցրել է՝ «Ընտանիքում, հատկապես մայրական գծով արյունակիցների մեջ կա՞ն արդյոք նման հիվանդություն ունեցողներ»:

Հարցված կանայք և աղջիկները մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումների ժամանակ նշել են, որ չեն հետաքրքրվել, թե ինչ նպատակ է հետապնդել բժիշկների կողմից իրենց ուղղված հարցադրումը, բայց հարցից եզրակացրել են, որ հնարավոր է որոշ հիվանդությունների ժառանգականությամբ փոխանցում՝ մայրական կողմով: **(Գծապատկեր 3)**

Գծապատկեր 3



Դեբեդ գետի հետևանքների ուսումնասիրության և մեր հետազոտության արդյունքում պարզել ենք, որ ջրհեղեղները կարճաժամկետ և երկարաժամկետ բացասական հետևանքներ ունեն մարդկանց առողջության և բարեկեցության վրա: Կարճաժամկետ հետևանքները ներառում են մահացությունները, վնասվածքները և ալերգիկ ու վարակիչ տարբեր հիվանդությունները, որոնք մայիսյան աղետի դեպքում բարեբախտաբար լուրջ դրսևորումներ չեն ունեցել: Մինչդեռ ջրհեղեղի երկարաժամկետ հետևանքները ներառում են ոչ վարակիչ բազմաթիվ հիվանդություններ և հոգեսոցիալական առողջության ասպեկտներ: Այստեղ ևս

առյուծի բաժինն ընկնում է սոցիալապես անապահով խավի՝ հատկապես կանանց ու միայնակ մայրերի խնամքին գտնվող երեխաներին:

«Ամուսնուս կորցրել եմ: Իմ խնամքին են 3 անչափահաս երեխաներս ու սկեսուրս, որ հաշմանդամ է՝ սայլակի վրա: Չեմ ուզում վերհիշել այդ գիշերվա սարսափները, որովհետև չեմ էլ փորձում պատկերացնել, թե ինչ կլիներ երեխաներիս հետ, եթե հարևաններս օգնության չհասնեին» /49 տարեկան, Քարկոփ/:

«2 երեխաներին հագցրել ու սպասում էի, թե ով և ինչպես կգա մեզ օգնելու. օգնեցին, փրկեցին» /37 տարեկան, Սանահին/:

Մոնիթորինգի նպատակով իրականացված հարցումներին մասնակցած 6 միայնակ մայրերից 5-ը նշել են, որ միայնակ մայր լինելու իրական դժվարությունն ավելի շատ զգացել են ջրհեղեղի ժամանակ, երբ հասկացել են, որ այդ պահին իրենց աջակցություն է պետք երեխաներին տարածքից հանելու համար, ընտանիքում սեփական տրանսպորտային միջոցի առկայության կարևորությունն են զգացել: Նրանցից 4-ը մասնակցել են աղետից հետո համայնքներում կազմակերպված հոգեբանների հետ հանդիպումներին և այդ հանդիպումների ազդեցությունն իրենց հոգեբանական վիճակի վրա որոշակիորեն ցանկալի ազդեցություն ունենալու առումով գնահատել են «դրական»:

IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ մոնիթորինգի արդյունքում պարզեցինք մայիսյան աղետի բազմակողմանի ազդեցությունները տարածաշրջանի բնակչության, այդ թվում և՝ կանանց ու աղջիկների վրա:

Կառավարության կողմից ձեռնարկված աջակցության բազմաթիվ միջոցառումներն ավելի շատ միտված են եղել բնակչության նյութական նվազագույն կարիքները հոգալուն: Աղետից 7 ամիս անց էլ այդ ծրագրերը դեռևս չեն հասել իրենց առջև մինչ օրս դրված նպատակներին: Մեր ուսումնասիրությունների ժամանակահատվածում ակտիվ շինարարական աշխատանքների ականատեսը եղանք, բայց այստեղ էլ դեռևս բազմաթիվ խնդիրներ կան, այս կամ այն պատճառով /հիմնականում համապատասխան և անհրաժեշտ փաստաղթերի բացակայություն/ ծրագրերից դուրս մնացած ընտանիքներ: Իսկ միայնակ կանանց ու աղջիկների խնամքի տակ գտնվող ընտանիքներն ավելի խոցելի վիճակում են, քանի որ, եթե տղամարդիկ կարողանում են գոնե որպես աշխատուժ ներգրավվել իրենց իսկ տան վերանորոգման աշխատանքներում, կանայք հիմնականում դրա հնարավորությունը չունեն, և իրար շաղկապված խնդիրների հսկայական շղթա է ձևավորվում՝ միջոցների անբավարարությունից, շինանյութը հայթայթելու դժվարություններից, որակյալ և համապատասխան վարպետներ գտնելուց մինչև տրանսպորտային ու ժամկետների խնդիրներ և այլն:

Ինչ վերաբերում է բնապահպանական, առողջապահական և ֆեմինիստական հարցերին, դարձյալ հայտնվում ենք տեսանելի՝ առաջնային, և ոչ տեսանելի՝ հետպլանային բաժանումներին, այսինքն՝ դեռևս բաց են մնում կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են.

1. Իրավագիտակցության բարձրացում: Այս առումով կլիմայական, բնապահպանական և գենդերային արդարությունը պահանջում է կանանց և աղջիկների իրավական ապահովություն և անվտանգության զգացում անվտանգ միջավայրում:

Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ աղետի գոտու կանանց և աղջիկների մոտ կլիմայական, բնապահպանական և գենդերային արդարության առումով իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու խիստ անհրաժեշտություն կա: Կանայք ու աղջիկները նույնպես պետք է իրազեկ լինեն, որպեսզի ոչ միայն կարողանան հետաքրքրվել իրենց իրավունքներով և պարտականություններով, այլև բազմակողմանիորեն ընկալեն և կարողանան հետևողական լինել կլիմայական, բնապահպանական փոփոխությունների, դրանց ազդեցությունների ու հետևանքների, աղետների ժամանակ և արտակարգ իրավիճակներում սեփական իրավունքների ապահովության և անվտանգության, ինչպես նաև բնապահպանական արդարության իրավունքների երաշխիքներին:

Կանանց և աղջիկների, մասնավորապես միայնակ մայրերի իրավագիտակցության ցածր մակարդակը խոչընդոտում է բնապահպանական և գենդերային արդարության հանրային ընկալմանը, ինչպես նաև կոնկրետ իրավիճակում

աղետներին դիմագրավելուն:
Հասարակության բարձր իրավագիտակցությամբ է պայմանավորված, թե որքանով է պաշտպանված կնոջ բնապահպանական և գենդերային արդարությունը: Սրանք հարցեր են, որոնց ճիշտ իրականացման հիմքում դրված է կանանց և աղջիկների իրավագիտակցության բարձր մակարդակի կարևորությունը:

2. Ակտիվ քաղաքացիական հասարակություն: Բնակլիմայական և գենդերային արդարությունը պետք է մշտապես բնապահպանների, հասարակական կառույցների, լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում գտնվի, քանի որ նրանք կապող օղակ են, և իրենք են ապահովում այս կամ այն իրավիճակի /այս դեպքում՝ ջրհեղեղի, բնական աղետի/ արդյունքներն ու հետևանքները հասարակության լայն շրջանակներին փոխանցելու գործառույթը: Հանրության իրազեկվածությունն է նպաստում, որ կանայք ու աղջիկները դառնան ակտիվ քաղաքացիներ և իրենց մասնակցությունն ունենան բնակլիմայական և գենդերային արդարության հասնելու գործում:

3. Սոցիալական արդարություն: Բնակլիմայական և գենդերային արդարությունը պետք է նպաստի նաև մեր երկրում կանանց և աղջիկների սոցիալական արդարության ապահովմանը՝ ընդգծված ուշադրության արժանացնելով բնապահպանական խնդիրներ ունեցող, հատկապես մարզային և գյուղական բնակավայրերը:
Մոնիթորինգի արդյունքում պարզել ենք, որ աղետից տուժած կանայք և աղջիկներն առաջնային պլան են մղում տեսանելի կորուստները: Հայաստանում բնակվող կանայք ու աղջիկները /հատկապես գյուղական բնակավայրերում/ շարունակում են չկարևորել սեփական առողջությունը, հոգեբանական վիճակը, նյարդային հավասարակշռությունը՝ չգիտակցելով, սակայն, որ բազմաթիվ հիվանդություններ հենց ծագում են այդ խնդիրներից:

Հետազոտության վերլուծությունը հանգեցնում է, որ անհրաժեշտ է կարևորել կանանց և աղջիկների՝ բնակլիմայական և գենդերային արդարությանը միտված, ֆեմինիստական թեմաներով հանդիպումները, զրույցները, դասընթացները: Որպես իրազեկման միջոց օգտագործել նաև սոցիալական ցանցերի ու լրատվամիջոցների հնարավորությունները, քանի որ սրանք մեր օրերում շարունակում են մնալ և ծառայել որպես պրոպագանդայի և իրազեկման հզոր գործիքներ:
Առաջարկել իշխանություններին միջոցներ տրամադրել աղետի գոտու կանանց և աղջիկների համար տարբեր ձևաչափերով՝ կազմակերպելու հոգեբանական աջակցություն ներառող միջոցառումներ և բժշկական պարտադիր ստուգումներ:
Այս գործում ակտիվորեն ներգրավել նաև կանանց ու աղջիկների հիմնախնդիրներով զբաղվող տարբեր կառույցների /ՀԿ-ներ, իրավապաշտպան և բնապահպանական կառույցներ, ցերեկային կենտրոններ, լրատվամիջոցներ և այլն/:
Բնակլիմայական և գենդերային արդարության թեմաներով իրազեկումներն ուղղակի ազդեցություն կունենան հասարակության լայն շրջանների կանանց և աղջիկների իրավագիտակցության մակարդակը բարելավելու վրա:
Աղետի ազդեցությունների ու հետևանքների, դրանց դիմագրավելու գործընթացների հետազոտության և մոնիթորինգի արդյունքում վեր հանված խնդիրներին ու դրանց ազդեցություններին հետևողական լինելը և դրանց համար լուծման բազմակողմանի մեթոդների կիրառումը կխթանի այս ոլորտում հասարակության իրազեկվածության

բարձրացմանը, սա էլ իր հերթին կնպաստի կանանց և աղջիկների մոտ աղետների հետևանքների խորքային և բազմակողմանի ազդեցությունների ու հետևանքների նվազեցմանը, աղետներին ու արտակարգ իրավիճակներին հնարավորինս ճիշտ և գրագետ դիմագրավելուն: